Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի <<Զովունու Ռ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆիզիկա /8 դասաժամ/, հասարակագիտություն /8 դասաժամ/, ֆիզկուլտուրա /14 դասաժամ/, մաթեմատիկա /25 դասաժամ/, տեխնոլոգիա /6 դասաժամ/, անգլերեն լեզու /17 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

• դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,

• բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

• անձը հաստատող փաստաթուղթ,

• «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

• ինքնակենսագրություն (Ձև 5),

• այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

• ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

• հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

• որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2024թվականի օգոստոսի 28-ից սեպտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 13:30-ին ՀՀ Կոտայքի մարզի Զովունու Ռ.Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցում՝ Կոտայքի մարզ, գ. Զովունի , 6-րդ փողոց, 128շենք հասցեում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 055 234543, 094 817303 հեռախոսահամարներով: